Ի՞նչու կուել — այս բնական միտքը կայծակի արագութեամբ տարածւում էր ամէն կողմ, և զօրաշարքերը արագօրէն քայքայւում էին։ Հայկ. կորպուսի պետ զօր. Վիշինսկին, ապր. 11-ին, ընդհանուր սպայակոյտին արած հաղորդագրութեան մէջ, զօր. Նազարբէգեանի յանձնարարութեամբ, հետեւեալ բնորոշումն էր տալիս ստեղծուած դրութեան. «Բէգլի-Ահմեդի զօրամասի կողմից գրաւուած առաջաւոր դիրքի բախտը որոշւել էր երէկ զօր. Օղիչելիձէի կարգադրութեամբ՝ պատերազմական գործողութիւնները դադարեցնելու և բանագնացներ ուղարկելու մասին։ Այդ կարգադրութիւնը բացասական տպաւորութիւն արաւ զօրքերի վրա։ Սակայն, Կարսի բերդապահ զօրքին չչօշափեց. հաւանական է, որ Կարսը դիմանար երկու շաբաթից ոչ պակաս, գուցէ և ամբողջ ամիս։ Եթէ ժամանակին մերժէր թիւրքական պայմաններն այսօր առաւօտ ընդունելու առաջարկը, այդ դեռ կարող էր փրկել դրութիւնը, և Կարսի բերդը, անտարակոյս, յետ կը մղէր թիւրքերին. այսօր էլ դեռ բերդը շատ լաւ պաշտպանւում էր, մինչև որ ստացւեց վարչապետ Զիսենկելիի և զօր. Օղիչելիձէի կարգադրութիւնը, որ բանագնացներ ուղարկւեն՝ ճշտելու համար բերդի դատարկման պայմանները։ Այս բանը բերդապետին յայտնելուց յետոյ՝ կռիւը դադարեց։ Զօրքերը՝ ենթարկւելով հրամանի՝ հեռացան Աղաջ-Աղբարա-Հարամ Վարդան առաջաւոր դիրքերից»։

Այսպիսով, Զիսենկելիի կարգադրութիւնը կոտրեց հայկական բանակի դիմադրական թափը և պատճառ դարձաւ սարսափելի աղէտի։

Զիսենկելիի հրամանը ստանալուց յետոյ, զօր. Նազարբէգեանը և Ս. Մանասեանը ապարդիւն կերպով աշխատեցին ուղիղ հեռագրաթելով կապւել Թիֆլիսի Ազգ. Խորհրդի հետ. կապը խզուած էր։ Դրանից յետոյ, Նազարբէգեանը հրամայեց Էջմիածնի շրջանում գործող հայկական 2-րդ դիվիզիայի պետ զօր. Սիլիկեանին և Կարսի բերդապետ զօր. Դէյլեին 10 ապրիլ ժամը 17-ից սկսած դադարեցնել պատերազմական գործողութիւնները, և թիւրք հրամանատարութեան հետ սկսւեցին բանակցութիւններ երկու կողմերը զատորոշող գիծը ճշտելու համար։ Թիւրք առաջաւոր մասի հրամանատարը յայտնեց հայերի բանագնաց գնդ. Մորելին, որ ինքը զինադադարի կարգադրութիւն չի ստացել, հայերի դիմումը կուղարկէ բարձր հրամանատարութեան, բայց մինչ այդ, Վեհիբ փաշայի հրամանի վրա, ապր. 11-ին պիտի շարունակէ յառաջխաղացումը, ուստի առաջարկում է, որ ի զուր ընդհարումներ չունենալու համար, հայկական զօրքերը քաշւեն բերդային ամրութիւնների մօտ։

Յաջորդ առաւօտ թիւրք առաջաւոր զօրքերի հրամանատարից ստացւեց մի նամակ, որով հաղորդւում էր, որ զինադադարի առաջարկը ընդունւած է, թիւրք պատւիրակներն արդէն նշանակւած են, բայց մինչև բանակցութիւնների սկսումը հայկական զօրքերը պէտք է նահանջեն ու կանգնեն բերդի ամրութիւններից երկու վերստի վրա։ «Մեր զօրքերի մօտենալու միջոցին ձերոնք չպէտք է կրակեն, հակառակ դէպքում մենք ոյժ կը գործադրենք»։ Եւ, իրօք, ապր. 11-ին, թիւրքերը դիմեցին ընդհանուր յարձակման և աշխատում էին գրաւել Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը՝ հայերի նահանջի ճանապարհը կտրելու նպատակով, բայց բերդի մարտկոցներից բացւած ուժեղ կրակը կանգնեցրեց նրանց, թէև կռիւները շղաղարեցին։